էր ի գաւառէն Քաջբերունեաց ի քաղաքէն Արճիշոյ։ Թովման այս դէպքերի մասին պատմում է թէ իւր պատմութեան և թէ ՊԾԹ թուականին գրած մի ընդարձակ յիշատակարանի մէջ։ Ձեռքի տակ ունինք և Թովմայի 12 ընկերներից մէկի՝ Սարգիս Սանապատեցու մի յիշատակարանը, վերջին երկուսը մեր Նոր Նիւթերի մէջ առնուած*։ Երեք աղբիւրների մէջ ևս յիշուած են 12 աշակերտների անունները լրութեամբ կամ մասնակի. ըստ ՊԾԹ թուի յիշատակարանի դոքա են. Մարգարէ վարդապետ, Յակոբ վարդապետ, Յովհաննէս վարդապետ Փափշէնցի, միւս Յովանէս վարդապետ, Կարապետ վարդապետ, Մկրտիչ Նահապետենց, Մկրտիչ Օրբէլենց, Մկրտիչ Հողձեցի, Ղազար Մահդասենց, Թովմա, Ղազար Աղթամարցի, Մելքիսեդեկ Բերկրցի, Սարգիս։ Պատմութեան մէջ յիշուած են բացի սոցանից դարձեալ երկու անուններ՝ Մաթէոս և Կարապետ։ Սարգիսը կրկնում է միայն Թումայի (Մեծոփեցու), Մկրտչի (Նահապետենց), Ղազարի (ոբը), Մելքիսեթի, երկու միւս Մկրտչի (Օրբելենց և Հողձեցի) և միւս Թումայի անունները, որոնց իւր համեմատութեամբ «աւագ և երէց ամենայն իրօք» է կոչում։ Մենք հարկ համարեցինք յականէ յանուանէ յիշել դրանց անունները, որովհետև մի քանիսների համար հաստատ գիտենք, որ գաղափարակից հանդիսացան Թովմային հայրապետական Աթոռի էջմիածին փոխադրութեան մեծ գործում և այսպէս կամ այնպէս հետք թողին մեր պատմութեան մէջ**։ Այստեղ

---

* Մեծոփեցի, Պատմ. 50—51. Նոր Նիւթեր. Ա.ր. 753. 755/6. 752. (16. 18/19. 15)։

** Այդպիսիներն են.

1. Կարապետ վարդապետ, որ յետոյ Խառաբաստայ վանքի վանահայր դարձաւ, նոյն վանքի Զաքէոս եպիսկոպոսի եղբօրորդին էր. ՊԿԵ (=1416) թուին Երուսաղէմում գնել էր մի աւետարան, որ Ս. Աստուածածնայ (Խառաբաստայ) վանքին նուիրեց. ՊԿԷ (=1417) թուին Յակոբ գրչին գրել է ասուել Տաթեւացու բարողները «յերկուց հատորաց» (№ 2155/2145). ՊԶԵ (=1456) թուին բաղդակից եղաւ Թովմային Շահուռնի եւ Սբանդարի շահատակութիւնների ժամանակ՝ փախչելով Բաղէշի կողմերը. ՊՂ. (=1441) թուին մասնակից եղաւ հայրապետական Աթոռի էջմիածին փոխադրութեան եւ Կիրակոսի ընտրութեան ժողովներին. ՊՂԵ (=1456) թուի մի յիշատակարան թուագրուած է Թովմա Մեծոփեցու եւ այս Կարապետ վարդապետի անունով իբրեւ Քաջբերունեաց երկրի նշանաւոր մարդկանց. ՊՂԸ (1449) թուին խաչարձան է կանգնում իւր հօրեղբօր Յովաննէս հերպետի համար. ՉԴ (=1454) թուին Խնտաթիսարեղան առ ոտս այս «ամենազով եւ հանճարեղ, իմաստուն եւ արդիւնաւոր Կարապետ բարունապետի» գրում է ԿԱԹ. ԹՂԹերի մեկնութիւնը։ Տես. Փիրղ. Նոստրբ 51 49/50 108. 153. 160. 175. Կոստանեանց. Թովմա Մեծոփ. Յիշատակարանը. 52.